



ՀԱՅԱՍՏԱՆԵՐԻ

ԺԷ ԴԱՐԻ ՀԱՅՈՑ ՎԵՐԱՆՈՐՈՒԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ



անը երկունքով է սկսվում ԺԷ-րդ դարն Արեւելյան Հայաստանի հայ ժողովրդի համար: Պարսիկների ու օսմանցիների միջև մղվող երկարատև պատերազմի ընթացքում ավերվում ու քանդվում են մեր հայրենիքի այս մասի շեն քաղաքներն ու գյուղերը: Ժամանակավոր Հաջողութուններից հետո Պարսկաստանի Շահ-Աբաս Թագավորը ստիպված է լինում Թուրքիայի ավելի զորավոր ուժի առաջ տեղի տալ և Երևանից նահանջել դեպի Պարսկաստան: Բայց, ցանկանալով իր նահանջից հետո օսմանցիներին մի կատարյալ ամալի երկիր թողնել, Շահ-Աբասը դիվային մի միտք է հղանում — ամբողջ Արարատյան դաշտի և շրջակա գավառների հայ ազգաբնակչությանը բռնի գաղթեցնել Պարսկաստան ու այսպիսով օսմանցիներին զրկել ամալացած երկրում սնունդ և ապաստան գտնելու հնարավորություններից:

Գաղթի քստմանի հրամանը տրվում է 1604 թվի աշնանը, և չնայելով մոտալուտ ձմռանն ու ժողովրդի աղաչանք-պաղատանքին՝ գաղթը դարնանը հետաձգելու, ոչինչ չի օգնում: Անգույթ ու անողորմ բռնակալի շար հրամանով բռնի գաղթն ի կատար է ածվում կարճ ժամանակամիջոցում: Ամենավաղագ դաժանությամբ բնակիչներին դուրս էին վտարում իրենց բնակարաններից ու հրո ճարակ դարձնում նրանց փարթամ ու շեն բնակարանները — քաղաքներն ու գյուղերը: Թե ի՞նչքան մարդ է կոտորվում այս բռնագաղթի օրերին ու մահավանդ գետում խեղդվում, Զուղայի մոտ Արաքսն անցնելու պահին, և թե ինչպիսի սրտաճմլիկ տեսարաններ էին տեղի ունենում, այդ բոլորը մանրամասնորեն և սրտի ամենայն դաժնությամբ նկարագրել է նույն դարի պատմագիր Առաքել Դավրիժեցին: Հաջորդ 1605 թվի

գարնանը նույնպիսի դաժանությամբ գաղթեցնում են նաև Զուղա շեն ու հարուստ քաղաքի բնակիչներին, հիմնովին կործանելով ու հրկիզելով այդ փարթամ քաղաքը:

Այս աշխարհավեր գաղթից հետո, ինքնին հասկանալի է, որ տնտեսական ծանր կացությունը պիտի ծանրանար ամալացած երկրի վրա: Համարյա մարդ չէր մնացել, որպեսզի այս բարեբեր ու հարուստ երկրում հողագործությամբ ու անասնապահությամբ զբաղվեր: Սովի ուրվականը կախվում է երկրի վրայից: 1606 թվին սկսված սովը հետզհետե սաստկանում ու իր գաղաթնակետին է հասնում 1608 թվին: Մարդակերության այնպիսի սարսոցեցուցիչ դեպքեր է պատմում Առաքել Դավրիժեցին, որ մարդու մազերը փշաքաղվում են:

Անգույթ թագավորի բռնության տակ հեծող ու սովի ճիրաններում գալարվող ցլոր ու ցան եղած սակավաթիվ ժողովուրդը հուսահատության դուռն էր հասել: Զկար ոչ մի օգնություն, չէր հնչում ոչ մի սրտապլնդիչ, հուսադրող ձայն, որ նրան խրախուսեր, հաներ լքյալ ու հուսաբեկ դրությունից:

Հայ ժողովրդի շար բախտից, այդ օրերին էջմիածնի Մայր Աթոռի գահակալը մի անարժան մարդ էր, որն համաժողովրդական այս մեծ աղետի ժամանակ ավելի շատ իր անձնական հաճույքների մասին էր մտածում, քան ժողովրդի վիշտը ամոքելու, նրան հուսադրելու մասին:

Դա Մելքիսեթ կաթողիկոսն էր:

Ընդհանրական Աթոռի այն ժամանակվա Դավիթ կաթողիկոսը ինքնագլուխ կերպով Մելքիսեթին կաթողիկոս է օծում, որպեսզի երկուսով միասին միջոցներ փնտռեն Մայր Աթոռն ազատելու իրենց խել անփութության շնորհիվ կուտակված բազում պարտքերից: Բայց, հակառակ Դավիթ կաթողիկոսի ակնկալություններին, Մայր Աթոռի վիճակը առավել ևս ծանրանում է, Մել-

քիսեթի վարած ղեխ ու շուրջ կյանքի հետեւ-
վանքով:

Դավիթ կաթողիկոսը հուսահատվելով հե-
ռանում է էջմիածնից, իսկ Մելքիսեթին էլ
միանգամայն բարձրթող անկող էջմիածինը,
բնակություն է հաստատում Երևանում:
Նյութական նեղ վիճակից ստիպված Մելքի-
սեթն էլ, իր հերթին, կաթողիկոս է օծում
յուր եղբորորդի Սահակին, որպեսզի վերջինս
վճարի զիջված պարտքերը: Մի առժամա-
նակ Սահակի հետ ապրելուց հետո Մելքի-
սեթը բազմաթիվ պարտատերերի ձեռքից
ազատվելու համար գաղտնի փախչում է
Թուրքիա:

Պարտատերերն ամենայն խստությամբ
իրենց պարտքերը պահանջում են Սահակ
կաթողիկոսից, իբրև Մելքիսեթի հաջորդի,
իսկ սա էլ նրանցից թաղնվելով սկսում է
գյուղից գյուղ թափառել ու աստանդական
կյանք վարել: Վերջում, հուսահատվելով
սա էլ հեռանում է իր հորեղբոր՝ Մելքիսե-
թի օրինակին ու հարմար առիթից օգտվե-
լով փախչում Թուրքիա:

Որքան էլ անարժան են եղել փառա-
սիրությունից դրդված Լուսավորչի դահլը
բարձրացած այս երկու կաթողիկոսները,
բայց անուամենայնիվ փաստը մնում է
փաստ, որ հայոց կաթողիկոսները, պարս-
կական տիրապետության օրոք ոչ մի օրի-
նական ճանապարհ չունենալով, ստիպված
են եղել ստեղծված անտանելի կացություն-
ներից դուրս գալու համար փախուստի դիմել,
դեթ այս միջոցով պարսկական հարկահան-
ների ձեռքից ազատվելու համար: Այժմ
մենք չենք կարող առանց ծիծաղի կարդալ
Սահակ կաթողիկոսի սրընթաց փախուստի
նկարագրությունը, որ տալիս է Առաքել
պատմագիրը: Սահակ կաթողիկոսը պատեր-
վակ բռնելով, թե Երևանից էջմիածին պիտի
գնա հաջորդ օրվա Զորոհնյաց հանդեսի հա-
մար այնտեղից պատշաճ անոթներ բերելու,
համոզում է իրեն միշտ ուղեկցող հարկա-
հաններին, թույլ տալ էջմիածին մեկնելու:
Նրանք էլ, հավատալով կաթողիկոսի խոս-
քին, թույլ են տալիս, բայց ճի հասանիլն ի-
կէս ճանապարհին՝ փոխեալ զձե զգեստոցն
ի ձև և ի կերպ զօրականի և դարձուցեալ
զերասանակ երիվարին և դիմեալ դէպ ի
Նախշուան քաղաք և ի սահմանս նորա: Իսկ
ի մտրակիլ օղապարիկ և քաջազօրեղ և
բարձրապարանոց երիվարին, ոչ թե զերեսօք
երկրի, այլ ընդ երկնիք և ի վերայ թևոց
ամպոց առեալ ածէր զնա շեշտակի ի սահ-
մանս երկրին Նախշուանայ... և անտի ի
Վան քաղաք. և այսու կերպիւ ճողպարեալ
փրկեցաւ Սահակ կաթողիկոսն ի ձեռաց զու-

լերոցն»:

Այսպիսի իրադրության պայմաններում,
իհարկեհ, խոսք չէր կարող լինել երկրի կու-
տուրական, մտավոր ու հոգևոր կյանքի
զարգացման մասին: Այդ ժամանակները
զպրոցները գտնվում էին վանքերում և այս-
տեղից էր գիրն ու գրականությունը շատ թե-
քիչ տարածվում ժողովրդի մեջ: Սակայն վան-
քերը քանդվել ու ամայացվել էին, միաբան-
ները ցրվել կամ ոչնչացվել: Ղկար ուսուցման
վայր, Ղկար ուսուցող ու ուսանող. համառա-
րած ամլություն էր տիրում. սակավաթիվ
կուսակերոն հոգևորականները, հետևելով
վերը հիշված կաթողիկոսների օրինակին,
անհանդուրժելի կյանք էին վարում: Առաքել
պատմագիրը սրանց մասին հետևյալն է գր-
ում. «Իւրաքանչիւր սևազուլս ունէր իւր
զինչս առանձին, այգի և բուրաստան, փե-
թակ, և տուն և մասուն և յամբարանոցս...
Նաև զմուսս հասարակաց վանիցն մասունս
արարեալ յինքեանս բաժանէին, և զայն
ամենայն ինքեանց և ազգայնոց և յիւրեանց
հաճելեաց արանց ծախէին... Եվ զնուիրեալ
տեղիսն Աստուծոյ...լցեալ էին կանամբք և
տանտիկնօք և իւրեանց աղգայնօք: Եվ
բնաւ ոչ գիտէին, թէ պարտ է կարգաւորի
վեղար և իիյոն ունիլ զիւրեաւ կամ հան-
դերձս խոշորս, այլ որպէս աշխարհական...
ազնիւ զգեստիւ պճնէին... ի բոլոր տարին
ուսիք և գինի և միս անխտիր: Սոյնպէս և
զեղական երիցունք անուամբ միայն քահա-
նայք... Ոչ կանխէին ի ժամ աղօթից յեկե-
ղեցի և ոչ լինէր լսելի ձայն ժամակոչի ի գե-
ղորայս ...Եվ ոչ միայն գեղական երիցունք
և արեղայք անուղղայ կարգօք լեալ թափա-
ռականք, այլ և կաթողիկոսքն... յաղագս
փառամոլութեան և ազահութեան... ի պար-
սից թագաւորէն առնուին զիշխանութիւն
կաթողիկոսութեան և ի շրջազայութեան
իւրեանց ի մէջ ժողովրդեանն թագաւորական
ժառայ և այլազգի զօրականս շրջեցուցա-
նէին ընդ ինքեանս և զիրաւունս և զհասս
որք ի ժողովրդեանէն՝ ճշտիւ և բռնութեամբ
ուժգին առնուին... Եվ կաթողիկոսքն, որպէս
ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալք
զաստիճան կաթուղիկոսութեան, սոյնպէս և
ինքեանք ձեռնադրեալ եպիսկոպոսունքն և
քահանայքն տգէտք, խոտանք և անպի-
տանք, որք էին լեալ պաշտօնեայք որովայ-
նի՝ հանապազ ի գինեբրբուս զեգրեալք գու-
սանօք իբրև զմարմնաբու իշխանս, յառաւօ-
տէ մինչև ցերեկոյ հետեւեալ կատակաց և
լիտի բանից և դատարկութեան»:

Համատարած տգիտության ու բարքերի
վատթար անկման այդ ժամանակաշրջանում
հաղվալուտ մի օլաղիս էր ներկայացնում

իրենից հռչակավոր Տաթևի վանքի մոտ գտնվող՝ նորից վերանորոգված Սյունյաց Հարանց Մեծ Անապատը. այստեղ նոր մարդիկ էին հայտնվել, որոնք նոր մտքեր էին քարոզում՝ հակառակ տիրապետող մտայնության. սրանք կուսակրոններին քարոզում էին հեռու մնալ աշխարհիկ գելի ու շվալտ կյանքից, պարզ, անբասիր ու բարոյական կյանք վարել, մտավոր աշխատանքով զբաղվել, սիրել գիրքը, ուսումնասիրել նախնիքների թողած գրական ժառանգությունը, շրջել ժողովրդի մեջ, մխիթարել, հուսադրել նրան, ոգեկոչել բարոյական կյանք վարելու, վերանորոգել ավերակ եկեղեցիներն ու վանքերը և դպրատներն ու դպրոցներն հաստատել:

Այս Մեծ Անապատի ծնունդն է հանդիսանում Մովսես Տաթևացին, հայ նշանավոր կաթողիկոսներից մեկը:

ՄՈՎՍԵՍ ՏԱԹԵՎԱՑԻ

Տաթևացին Սյունյաց աշխարհի Խոտանան գյուղից էր. տասն և հինգ տարեկան հասակում նա կուսակրոն արեղա է ձեռնադրվում. իր կրթությունը ստանում է նախ Սրապիոն կաթողիկոսի մոտ և ապա վերջինիս աշակերտ Գրիգոր Կեսարացու մոտ: Սրապիոն կաթողիկոսը Կեսարացուն հատուկ պատվիրում է, միշտ հետևել պատանի Մովսեսին, կրթել, դաստիարակել ու արքունքի հասնելուց էլ վարդապետական կոչում ու գավազան տալ նրան:

Մի որոշ ժամանակ անցնելուց հետո Մովսես արեղան իր ուսուցչից թուլյալվություն է ստանում Երուսաղեմ մեկնելու՝ սրբազան վայրերին երկրպագություն տալու և Քրիստոսի գերեզմանը համբուրելու համար: Իր սրտի փափագը կատարելուց հետո նա Երուսաղեմից ուղևորվում է Եգիպտոս ու շրջում այն բազմաթիվ, հատկապես դիտինների, վանքերը, որոնք գոյություն ունեին այնտեղ: Շրջագայելով վանքերը Մովսես արեղան մանրամասն ծանոթանում է այդ վանքերում տիրող կարգ ու կանոնի, բարքերի, միաբանների վարած կյանքի ու կատարած աշխատանքների հետ: Երևի հենց այս շրջագայության ժամանակ էլ նա մտքում դնում է Հայաստանի անշքացած վանքերին նոր կյանք հաղորդելու համար փոխ առնել ու այնտեղ փոխադրել այն ամենը, ինչ որ լավ ու օրինակելի էր այս վանքերում: Եգիպտոսից Երուսաղեմ վերադառնալով նա լուսարարություն էր անում Քրիստոսի հարության տաճարում:

Հենց այդ ժամանակները Երուսաղեմ են գալիս երկու հայ հոգևորական—Սաղմոսավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը և Տրապիզոնի ալրի քահանա տեր Կիրակոսը: Այս երկուսն էլ այնքան էին տարված անապատական կյանքով, որ Երուսաղեմի շրջակայքում կամ Հորդանան գետի ափերին մի հարմար վայր էին որոնում—վանք-անապատ հիմնելու, միաբանություն հաստատելու և աշակերտներ հավաքելու ու կրթելու

համար: Սակայն, նրանք ամբողջ Ավետյաց երկրում չեն կարողանում գտնել իրենց որոնած վայրը:

Մովսես արեղան ծանոթ լինելով այս երկուսի մտադրությանը, խորհուրդ է տալիս թողնել հեռավոր Պաղեստինը և գնալ Արևելահայաստան՝ Սյունյաց աշխարհը, ուր, շնորհիվ տիրող մեկիք Շահնազարի հովանավորության, ցանկալի անդորրություն էր տիրում ու այնտեղի բազմաթիվ վանքերից մեկում հաստատվել: Միաժամանակ ավելացնում է, որ ապագայում, Երուսաղեմից հեռանալուց հետո, ինքն էլ կգա ու կմիանա նրանց:

Սարգիս եպիսկոպոսն ու Կիրակոս քահանան սիրով ընդունում են Մովսես արեղայի խորհուրդը և Սյունիք գալով վերջնականապես հաստատվում են Տաթևի մոտ գտնվող Հարանց Մեծ Անապատում ու միաբանություն կազմելով հարություն տալիս մեծ Գրիգոր Տաթևացու հաստատած դպրատանը: Այս Մեծ Անապատը ժամանակի ընթացքում այնքան մեծ հռչակ է հանում, որ ամեն կողմից, թե Արևելյան, թե Արևմտյան Հայաստանից ու Միջնաշխարհից, բազմաթիվ աշակերտներ էին գալիս այստեղ՝ ուսանելու:

Մովսես արեղան որոշ ժամանակ Երուսաղեմում մնալուց հետո գնում է Կ. Պոլիս, իր ուսուցիչ Գրիգոր Կեսարացու մոտ, որն այդ ժամանակ պատրիարք էր, և այստեղ էլ շարունակում է աշակերտել նրան: Իր պարկեշտ կյանքով, համեստ վարք ու բարքով, պարզ ապրուստով նա այնպես է գրավում տեղացի հայ ազգաբնակչության սիրտը, որ ամենքն էլ Գրիգոր Կեսարացի պատրիարքին խնդրամատուց են լինում Մովսես արեղային վարդապետական գավազան շնորհելու համար: Կեսարացին զիջանելով ժողովրդի թախանձանքին և միաժամանակ բարձր գնահատելով Մովսես արեղայի անձնական արժանիքներն ու սրբասեր կյանքը, մեծ հանդիսավորությամբ վարդապետական

գալազան է հանձնում նրան, այսպիսով կատարելով հանդուգյալ Մրապիոն կաթողիկոսի պատվերը:

Միառժամանակ Կ. Պոլսում մնալուց և իբրև վարդապետ տեղի հայ եկեղեցիներում շարունակ քարոզելուց հետո, Մովսես վարդապետը Գրիգոր պատրիարքի կարգադրությամբ քարոզչության է դուրս գալիս և շրջագայելով հասնում Տիգրանակերտ, ուր այցելում ու համբուրում է իր առաջին ուսուցիչ Մրապիոն կաթողիկոսի շիրիմը: Այստեղից, ճանապարհը շարունակելով, նա անցնում է Վանով ու Թավրիզով և մտնում Սյունիք, որտեղ Մեծ Անապատում հանդիպում է Սարգիս եպիսկոպոսին ու Կիրակոս քահանային՝ միաբաններով և բազմաթիվ աշակերտներով շրջապատված:

Հոգեկան մեծ խնդակցությամբ երեք նախկին բարեկամներն էլ ավելի զարկ են տալիս իրենց սկսած գործին:

Սակայն Մեծ Անապատի դպրոցի վերանորոգչական ուսմունքը և այնտեղից ժողովրդի մեջ քարոզելու դուրս եկած անձանց գործունեությունը ամենևին դուր չեն գալիս թե՛ հղիացած ու անունով միայն հոգևորականներին և թե՛ փառամոլ Մեկքիսեթ կաթողիկոսին, որը նորից վերադարձել էր էջմիածին: Մեկքիսեթ կաթողիկոսը Մայր Աթոռի հարստությունը վատնելով, նույնիսկ նրա սրբությունները մահմեդականների մոտ գրավ դնելով և ոչ մի արժեքավոր գործ չկատարելով հանդերձ, ամեն կերպ խոչընդոտներ էր հարուցանում Մովսեսի ու նրա ընկերների քարոզչական գործունեության առաջ, մերժելով նրանց քարոզածները, այսինքն այն ամենը, ինչ որ ամենից առաջ ինքը, որպես եկեղեցու ծայրագույն պետ, պետք է իրագործեր, վերականգնելով վանքերն ու դպրատները և պայքարելով բարձրի անկման դեմ:

Մովսես վարդապետը սկզբում արհամարհում է Մեկքիսեթի գաղտնի մեքենայությունները և անձանձրույթ շարունակում իր գործունեությունը թե՛ Հարանց Մեծ Անապատում և թե՛ նրա պատերից դուրս, երբ ժամանակ առժամանակ հեռանում էր Անապատից ժողովրդի մեջ քարոզելու համար: Սակայն, վերջում այնքան է ձանձրանում Մեկքիսեթի հայտնի ու գաղտնի դավերից ու հալածանքներից, որ որոշում է հեռանալ Սյունիքից և քաշվել Արևմտյան Հայաստան, որի համար էլ գալիս է Երևան: Մի քանի օր այստեղ մնալով, նա, իբրև վարդապետ, քարոզում էր ժողովրդին, մխիթարում, խրատում, պարտադրում բարի, առաքինի, քրիս-

տոնավայել կյանք վարել, դպրոց բաց անել, աշակերտներ դաստիարակել և եկեղեցու համար ուսումնադեսու ու արժանավոր հովիվներ պատրաստել:

Կենդանի խոսքի ծագավոր ժողովուրդը վաղուց այսպիսի քարոզներ չէր լսել: Եվ ի՞նչ պիտի քարոզեին նրան Մեկքիսեթ ու Սահակ կաթողիկոսները, որոնք փառամոլության մարմնացած միայն իրենց սեփական անձի մասին էին մտածում ու անձնական կարիքներին գոհացում տալու համար քաղաքական իշխանության օգնությամբ ժողովրդից կորզում ամեն բան, փոխարենը ո՛չինչ չտալով նրան. սրանից զատ, իրենց անպարկեշտ կյանքով էլ գայթակղության աղբյուր էին հանդիսանում ժողովրդի համար:

Մովսես վարդապետը մտադրություն ուներ Թուրքիա անցնելու ու այնտեղ հաստատվելու: Բայց Երևանի բոլոր հայ բնակիչները թախանձագին խնդրում են նրան չհեռանալ Երևանից և խոստանում են ամեն աջակցություն:

Մովսես վարդապետը ընդառաջելով ներանց ցանկությանը, մնում է Երևանում, վերանորոգում Անանիա առաքյալի անապատը՝ իր հարակից շենքերով, միաբանություն ու դպրոց հաստատում, կարգ ու կանոն մղտցնում և կարճ ժամանակամիջոցում մեծ համբավ հանում ոչ միայն Արարատյան աշխարհում, այլ և ավելի հեռավոր վայրերում:

Մեկքիսեթ կաթողիկոսը, թե խանի երկյուղից և թե ժողովրդի Մովսես վարդապետի հանդեպ տածած սիրուց քաշվելով, ստիպված էլինում աչք փակել Մովսեսի ունեցած հաջողությունների դիմաց և առժամապես լռել: Վերջում էլ մտածում է իր խախտված նյութական դրությունը բարվոքելու համար Մովսես վարդապետին օգտագործել, և նրա մասնակցությամբ մեռնօրհնեք կատարել, որի ժամանակ, ըստ հին սովորության էջմիածնում ահագին ժողովուրդ էր հավաքվում և առատ աջահամբույրներով Մայր Աթոռի նյութական դրությունը կայունացնում: Բայց Մովսեսը հրաժարվում է այդ պատվից, առարկելով որ ինքը վարդապետ է և ոչ եպիսկոպոս: Այն ժամանակ Մեկքիսեթը Երևան է գալիս՝ նրան եպիսկոպոս ձեռնադրելու համար: Մովսեսը հրաժարվում է իրեն արված այդ բարձր պատվից, սակայն վերջում զիջանելով ժողովրդի, ինչպես և իր բազմաթիվ աշակերտների ու քահանաների թախանձանքին, համաձայնում է: Մեկքիսեթ կաթողիկոսը հենց Անանիա առաքյալի

անապատի. վանքում էլ նրան եպիսկոպոս է ձևնադրում և հետո էլ իր հետ էջմիածին տանելով, ժողովրդի խումն բազմության ներկայությամբ շքեղ մեռնոթոններ կատարում:

Նորաստակ Մովսես եպիսկոպոսի հոշակն օրեցօր ավելի է տարածվում: Նոր ջուղայեցիք ցանկություն են հայտնում անպայման նրան տեսնելու իրենց մեջ: Մովսես եպիսկոպոսին նոր Զուղա հրավիրելու համար նրանք աշխարհիկ ու հոգևորական պատվիրակներ են ուղարկում Երևան: Մովսես եպիսկոպոսը սիրով կատարում է բռնություններ գաղթեցված հայ ժողովրդի փափազը ու հանձն առնում այդ երկարատև ուղևորությունը: Չտեսնված շուքով են ընդունում նրան նոր ջուղայեցիք: Մովսես եպիսկոպոսը սիրովում է տարագիր հայ ժողովրդին, մխիթարում, կարգ ու կանոն մտցնում նրանց հոգևոր կյանքում, հրավեր կարդալով հատուկ ուշադրություն դարձնել դպրոցի ու ուսուցման վրա: Այնուհետև նա այցելում է քաղաքի մոտակա գյուղերը, ուր հայ գաղթականություն էր տեղավորված և նրանց էլ սփռվում ու մխիթարում: Մի որոշ ժամանակից հետո նա, հրաժեշտ տալով նոր ջուղայեցիներին ու նրա շրջակա գյուղերի հայ բնակիչներին, մեծ շուքով ուղևորվում է Երևան: Այստեղ նա դարձյալ շարունակում է իր սկսած գործն առավել մեծ եռանդով:

Այդ ժամանակները Երևան է ժամանում Շահ-Աբասի խոշոր պաշտոնյաներից մեկը՝ Բալինդուր բեկը, որը, իր ժամանակի սովորության համաձայն, թագավորի համար տղաներ ու աղջիկներ էր ժողովում: Մի օր Ամիրզոնա խանն ու Բալինդուր բեկը զբոսանքի են դուրս գալիս և շրջադայելով հասնում Անանիա առաքյալի անապատը, ուր բնակվում էր Մովսես եպիսկոպոսը: Վերջինս նրանց հյուրասիրելուց իբրև նվեր մատուցանում է յուրաքանչյուրին յոթական սպիտակ պաշտառ մոմ: Բալինդուր բեկը հիանալով մոմերի սպիտակության վրա, դարմացած տեղեկանում է, որ մոմ սպիտակացնելու արհեստը Մովսես եպիսկոպոսը սովորել է Երուսաղեմում եղած ժամանակ: Բալինդուր բեկը հայտնում է, որ իր յոթը մոմը, իբրև նվեր, մատուցելու է Շահ-Աբաս թագավորին: Այդ լսելով Ամիրզոնա խանն էլ իր յոթը մոմը հանձնում է Բալինդուր բեկին՝ նույն նպատակի համար: Մովսես եպիսկոպոսն էլ, իր կողմից, այդ բոլորի վրա ավելացնում է յոթը մոմ: Երբ վերադարձին Բալինդուր բեկն իր տարած մոմերը

մատուցում է թագավորին, առաջնորդվում է նրանց սպիտակության ու պաշտառության վրա և ապա տեղեկանալով, թե ով է այդ մոմերը պատրաստողը, անմիջապես առանձին գրություններ Ամիրզոնա խանին պատվիրում է իր մոտ ուղարկել Մովսես եպիսկոպոսին:

Մովսես եպիսկոպոսը ստանալով Շահ-Աբասին ներկայանալու հրամանը, ուղևորվում է Պարսկաստան, բայց տեղեկանալով, որ շահը գտնվում է Բաղդադում, ինքը ևս գնում է այնտեղ և ներկայանում նրան: Շահը հարց ու փորձ է անում մոմի սպիտակացման արհեստի մասին և վերին աստիճանի գոհ մնում Մովսես եպիսկոպոսի տված մանրամասն բացատրություններից: Ապա մի հրովարտակ տալով նրա ձեռք, պատվիրում է գնալ Սպահան քաղաքը, ներկայանալ քաղաքապետին, ստանալ նրանից բոլոր հարմարությունները և արքունի ծառաներից երեքին սովորեցնել մոմ սպիտակացնելու արհեստը:

Մովսես եպիսկոպոսը Սպահան մեկնելով և շահի հրովարտակի համաձայն այստեղ բոլոր հարմարություններն ստանալով, արքունի ծառաներից երեքին ուժ ամսվա ընթացքում սովորեցնում է մոմ սպիտակացնելու արհեստը: Գործն ավարտելուց հետո նա իրեն ուղեկից վերցնելով իր վարժեցրած արքունի ծառաներին, ուղևորվում է Ֆահրապատ քաղաքը, ուր գտնվում էր այդ ժամանակ շահը: Շահի մոտ ծառայության մեջ էր գտնվում նոր ջուղայեցի հայազգի խոջա Նազարը, որն առանձին համակրանք էր վայելում: Այս խոջա Նազարի առաջնորդությամբ էլ Մովսես եպիսկոպոսը ներկայանում է շահին և ցույց տալիս արքունի ծառաների պատրաստած մոմերն, միաժամանակ ներկայացնելով իր վարժեցրած արքունի երեք ծառաներին: Շահը գոհ մնալով մտադրվում է առատ ընծաներով շահել Մովսես եպիսկոպոսի սիրտը: Բայց ըստի որ Զորհնյաց տոնը մոտենում էր, նա Մովսես եպիսկոպոսին նախ պատվիրում է ամենայն համարձակությամբ ու հանդիսավորությամբ կատարել քրիստոնյաների այդ սրբազան տոնը, միաժամանակ շնորհակալվել հայտնել, որ ինքն իր մեծամեծների հետ միասին հանդեսին ներկա պիտի լինի: Մովսես եպիսկոպոսը այդ տոնական օրվա համար մարդաշափ երկարությամբ հատուկ մոմեր է պատրաստում ու թագավորի, նրա մեծամեծների և խումն, թե հայ, թե ալազգի, բազմության ներկայությամբ մեծ հանդիսավորությամբ, շքեղ զգեստա-

վորումով ու գեղեցիկ երգեցողությամբ կատարում Զորքհնյաց հանդեսը Յահրապատ քաղաքի գետի ափին:

Ապա Շահ-Աբասը խոջա Նազարի միջոցով ուղարկեց իմանալ, թե ինչով կարող է գոհացնել Մովսես եպիսկոպոսին նրա մատուցած ծառայությունների համար, գանձե՞ր, պարգևնե՞ր, դաստակերտ շնորհի, թե՞ մի այլ բան: Խոջա Նազարը պատասխանում է, թե՛ այս հոգևորականը մարմնավոր ոչ մի բանի կարիք չունի և ոչ մի դանձ ու հարստություն էլ նրա համար նշանակություն չունեն. բայց եթե ուզում է նրան վաճառքած լինել, ապա թող տա նրան էջմիածնի փակակալության (լուսարարության) իրավունքը և նա այնտեղ դնելով ու Աստծուն սպասավորելով, կաղոթի թագավորի կենաց համար: Շահ-Աբասը կատարում է խոջա Նազարի, հետևապես և Մովսես եպիսկոպոսի, ցանկությունը ու արժունի հրովարտելով նրան այդ պաշտոնի մեջ հասցատեղիով, ճանապարհ է դնում նրան: Այս դեպքը տեղի է ունենում 1627 թվի ամրանը:

Նրան հասնելով ու այնտեղից էլ էջմիածին տեղափոխվելով Մովսես եպիսկոպոսն անմիջապես ձեռնամուխ է լինում Մայր Աթոռի վերանորոգության մեծ գործին:

Դավրիժեցին նախքան Մայր Տաճարի վերանորոգության նկարագրությունն անելը, իբրև ակադեմիկոս, մանրամասն տալիս է Տաճարի այդ ժամանակվա թշվառ վիճակի պատկերը, որն արդյունք էր Մելքիսեթ և Սահակ ապիկար կաթողիկոսների անփութության: Տաճարը բոլորովին ունայնացած էր, կողոպտված էին նրա դարձերը, ոչ գիրք կար, ոչ զգեստ, ոչ շուրջառ և ոչ էլ ժամերգություն ու պատարագ էր կատարվում այնտեղ. մինչև անգամ Քրիստոսի Իջման սեղանը ծածկոց չունեի, չկային կանթեղներ, չկար լույս, մշտական խավարն էր թաղավորում այնտեղ. միայն մի այլազգի մահմեդական երեմն-երեմն ձեթի ճրագ էր վառում ու սեղանի վրա դնում, որպեսզի անցվոր ճանապարհորդները ողորմություն տան իրեն: Տաճարի սալահատակը քար ու քանդ էր եղած և ինքը Տաճարը վերածվել էր գետնանների ու սողունների որջի: Տաճարի մայր գմբեթի մեծ լուսամուտները բոլորովին բաց էին, առանց շրջանակների ու ապակիների, այնպես որ թռչուններն այնտեղից ազատ էլ ու մուտ անելով, ծիրտ ու ծեղ էին թափում ներքև: Տաճարի դռնից էլ կաթողիկեի գլուխը, ամբողջ տանիքը, պատերի երեսները քանդված էին ու քարերը թափ-

ված, իսկ պատերի հիմքի քարերը փշրված ու ծակծկված: Քանդված ու ավերված էին Տաճարի շուրջը եղած բոլոր շինությունները: Ավերման հետևանքով Տաճարի շուրջն այնքան հող ու մոխիր էր դիզվել, որ յոթը կանգուն բարձրության էր հասել. հողը եկել ու ծածկել էր Տաճարի հիմքն ու աստիճանները:

Իր վերադարձին Մովսես եպիսկոպոսը ահա այսպիսի ողբալի վիճակում է գտնում Մայր Աթոռը: Իսկ Տաճարի զարդերը, անոթներն ու սպասները վերջին երկու կաթողիկոսները կամ ծախել կամ էլ գրավել էին դեռ մահմեդական իշխանների մոտ ու ստացված գումարներն իրենց անձնական կարիքների համար վատնել: Մովսես եպիսկոպոսի առաջին գործը լինում է անհապաղ աղատել գրավ դրված սրբություններն և դրանք էջմիածին տեղափոխել:

Վերանորոգության գործը սկսում է Տաճարի ընդարձակ բակի կարգի բերումով, այն աղատելով կուտակված հողից, մոխրից ու քարակույտներից: Այս նպատակով Քասախ գետից մի մեծ առվով ջուր է բերվում վանքի բակը. բազմաթիվ մշակներ դիզված հողն ու մոխիրը լցնում էին առվի հորդ ջրի մեջ, իսկ սա էլ տանում ու հեռացնում էր դրանք բակից: Հողից ու մոխրից անջատված քարերն էլ հավաքում և գործադրում են Տաճարի նորոգության վրա: Այնուհետև Մայր Տաճարի շուրջը բուրգերով զարդարված բնադարձակ պարիսպ է կանգնեցվում: Զանազան շինություններ են կառուցվում պարիսպներից ներս— արևմտյան կողմը կառուցվում են սենյակներ հյուրերի համար, հյուսիսային ու արևելյան կողմը՝ խցեր միաբանների համար, իսկ հարավային կողմը՝ սեղանատուն, փուռ, տնտեսատուն, շտեմարան: Բացի պարիսպներից, որոնք հողից էին շինված, մնացած բոլոր շինությունները կառուցվում են կոփածո քարից ու թրծված աղյուսից, կրի և ավազի կիրառությամբ: Տաճարի տանիքի ու կաթողիկեի խորխորված և քանդված տեղերը նորոգվում են հիմնովի և այսպիսով Տաճարը շքեղ տեսք է ընդունում:

Հարց է ծագում, թե ո՞րտեղից էր նստում Մովսես եպիսկոպոսը այս մեծածախս շինարարությունների համար պահանջվող նյութական միջոցները: Նրա սկսած շինարարության հռչակն այնքան է. տարածվում հայության մերձավոր ու հեռավոր շրջանակներում, որ ժողովուրդն ամեն կողմից ամենապատրաստակամությամբ շտապում է աջակից լինել վերանորոգիչ Մովսես եպիսկոպոսին: Մայր Աթոռը պատշաճ բարձրու-

թյան վրա ու շքեղ միճակում պահելու համար: Եվ այդ անում էր այն ժողովուրդը, որը վերջին երկու ապիկար կաթողիկոսների դատապարտելի ընթացքի հետևանքով սատել ու երես էր դարձրել հայության հոգևոր կենտրոնից: Մովսես եպիսկոպոսի դեպի ամեն կողմ ուղարկված նվիրակները բորբոքում էին ամենուրեք ժողովրդի սերը Մայր Աթոռի հանդեպ և առատ նվերներով էջմիածին վերադառնալով է՛լ ավելի հնարավորություններ ընձեռում նրան իր շինարարության ծավալն ընդարձակելու:

Մովսես եպիսկոպոսը սակայն միայն էջմիածնի նորոգությանը և առհասարակ նյութական շինարարությանը չի բավակահանում: Նա մեծ ուշադրություն էր դարձնում նաև հոգևոր, մտավոր, բարոյական կյանքի խնդիրների վրա: Իր պատրաստած բազմաթիվ աշակերտներին քարոզության է ուղարկում ամենուրեք. սրանք իրենց պարզեղ լավագույն, առաքինի կենցաղով և անընչասիրտությամբ շուտով ժողովրդի համակրանքին են արժանանում: Մովսեսի աշակերտները եկեղեցիներ են կառուցում, քահանաներ կարգում և կարգ ու կանոն մտցնում հոգևոր կյանքում, միշտ անշեղորհն հետևելով իրենց մեծ ուսուցչի օրինակին:

Մովսես եպիսկոպոսը մեծափառ Հովհաննա վանքում դպրատուն հաստատելով բազմաթիվ պատանիների ձրի ուսում է տալիս, բոլոր ծախսերն ինքը հոգալով: Այս պատանիներից շատերը հետագայում երեք, քառասուն, վարդապետ ու եպիսկոպոս են ձեռնադրվում և այն վանքերն ու եկեղեցիները, որոնք մինչ այդ ամայի էին, նորից լցվում են միաբաններով ու երեցներով:

Տեսնելով Մովսես եպիսկոպոսի այս եռանդուն ու հանրօգուտ գործունեությունը, հայ ժողովրդի լայն խավերը, որոնք զգվել էին նախորդ երկու կաթողիկոսների արարքներից, կաթողիկոսներ, որոնցից Սահակն արդեն մաղուց հեռացել էր էջմիածնից, իսկ Մելքիսեթն էլ նորից լքելով Թուրքիա անցել, ամեն կողմից թախանձագին խնդիրներ են ուղարկում նրան՝ աղաչելով հանձն առնել կաթողիկոսության աստիճանը. բայց Մովսեսն անարժան համարելով իր անձը, հրաժարվում է այդ բարձր կոչումից:

Մովսես եպիսկոպոսը միջոցներ էր որոնում Մայր Աթոռը պարտքերից ազատելու: Մելքիսեթը, Շահ-Աբասից կաթողիկոսության հրովարտակ ստանալու համար, խոստանում է Մայր Աթոռի հասույթներից պետական գանձարանին տարեկան հարյուր թուման հարկ վճարել. բայց իր վարած գեղ

ու շվայտ կյանքի շնորհիվ չի կարողանում այդ հարկը վճարել, որը տարեց տարի կուտակվելով, տոկոսներով հանդերձ ծանրանում է, առանց այն էլ խղճուկ, դանձարանի վրա: Եվ ինչպես տեսանք, երկու կաթողիկոսներն էլ պարսից հարկահանների ձեռից փախչում էին Թուրքիա: Իսկ հարկն անողոքաբար պահանջվում էր: Այս պարտքի մասին Ջամբուի հեղինակ Սիմեոն Երևանցին հետևյալն է գրում. «Ջայս մի՛ թեթև և փոքր ինչ կարծիցես, զի ըստ անուանն թէպէտ հարկը յիշիր, սակայն ի տալն հազարիւք ոչ վճարիր, և մանաւանդ նորն զհնովն անցնալ գոլով՝ դիզացեալ կայր ի վերայ սրբոյ Աթոռոյս»:

Մովսես եպիսկոպոսը որոշում է պարտքի խնդրով անձամբ գնալ Շահ-Աբասի մոտ և խնդրել, որպեսզի այդ պարտադիր հարկը վերացվի Մայր Աթոռի վրայից: Շահ-Աբասն այդ ժամանակ գտնվում էր Ղազվինում, ուր և ուղևորվում է Մովսես եպիսկոպոսը: Առաջ ներկայանալով շահի մեծամեծներին, նա հայտնում է իր մտադրության մասին: Նրանք բոլորն էլ խորհուրդ են տալիս բացել բաց հրաժարվել այդ մտադրությունից և շահի մոտ ամենեկին խոսք չբացանել դրա մասին, քանի որ «այս թագաւորս յոյժ արծաթասէր և ագահ է և այդքան շահուց արծաթոյ ոչ գանց առնէ»: Նրան հուսադրելու համար միաժամանակ առաջարկում են առժամապես լռել ու պատեհ առիթի սպասել: Մովսես եպիսկոպոսը ձեռնունայն ու տխուր սրտով վերադառնում է էջմիածին, բայց առանց հուսահատության:

Նրա բախտից շուտով վրա է հասնում այդ պատեհ առիթը: Հաջորդ 1628 թվին Շահ-Աբասը վախճանվում է ու գահ է բարձրանում նրա թոռ Շահնեֆին: Իսկույն, մեղարդեն հայտնի, խոջա Նազարը հատուկ մարդու միջոցով մի գրություն է ուղարկում Մովսես եպիսկոպոսին՝ հրավիրելով նրան Սպահան գալ և հարյուր թուման հարկի բարձման համար անձամբ ներկայանալ նոր շահին: Մովսես եպիսկոպոսի ուղածն էլ հենց այդ էր:

Մովսես եպիսկոպոսը նորից ուղևորվում է Պարսկաստան, հասնում Սպահան, տեսակցում խոջա Նազարի ու շահին շրջապատող մեծամեծների հետ և ամբողջ ութը ամիս դեղերելուց հետո թագավորավայել, մեծամեծ ու թանգարժեք ընծաներով ներկայանում շահին և, խոջա Նազարին էլ միջնորդ դարձնելով, աղերսում վերացնել էջմիածնի վրայից դրված ծանր հարկի բեռը: Շահը թանգարժեք ընծաներով դրավված կատա-

րում է Մովսես Եպիսկոպոսի խնդիրքը և կարգադրում բոլոր մատյանների միջից չնշել այդ հարկը ու այլևս չպահանջել Մայր Աթոռից: Երկար ժամանակ արքունի դռները մաշելը ինքնին վկայում է, թե իր ժամանակին որքան ծանր բեռ էր այդ հարկը Մայր Աթոռի համար:

Միաժամանակ Խոջա Նազարը միջնորդում է, որպեսզի Մովսես Եպիսկոպոսին հրովարտակ շնորհվի ամբողջ հայ ժողովրդի ցանկության համաձայն կաթողիկոսություն անելու: Նոր շահը այս խնդիրքն էլ է կատարում:

Մովսես Եպիսկոպոսը, պարտքի բարձրան հետևանքով թեթևացած, մեծ ուրախությամբ էջմիածին է վերադառնում: «Եվ սիրեցյալ համբաւ ազատութեան սրբոյ Աթոռոյն յընդհանուր աշխարհ յազգս հայոց և ամենեքեան լցեալ անպատում ուրախութեամբ ի ձայն ցնծութեան գոհանային զԱստուծոյ»:

Այնուհետև ամեն կողմից աղաչանքի ու աղերսանքի թղթեր են տեղում էջմիածին, խնդրելով Մովսես Եպիսկոպոսին այս անգամ այլևս չհրաժարվել ու համաձայնվել կաթողիկոս օծվելու: Նա խոնարհվում է

ժողովրդի ցանկությւն առաջ և 1629 թվի հունվարի 13-ին կաթողիկոս օծվելով, բաղմում Լուսավորչի գահին:

Կաթողիկոսության տարիներին ևս Մովսես Տաթևացին շարունակում է իր բազմակողմանի գործունեությունը: Երեք ու կես տարի հայրապետություն անելուց հետո, 1632 թվի մայիս ամսում նա հիսուն և հինգ տարեկան հասակում վախճանվում է Երևանում ու մեծ հանդիսավորությամբ թաղվում այստեղ՝ Կողեր կոչված հասարակաց գերեզմանատանը:

Նրա աշակերտներից մեկն այսպես է նրկարագրում իր ուսուցիչ կաթողիկոսին. «Գուլով ամենեկին պարզ բարոյութ և ազատական մտք, գեղեցկագիր և փառապանծ դիմօք վայելչացեալ, զմիջինն ունելով զչափ հասակի և բոլորովին ներքին և արտաքին մարդսն արտափայլեալ, որում Սուրբն Սահակ համարեսցիր, ըստ ամենայնի բարեւունակ տեսութեան, կրօնականօք և մակըստացականօք առատացեալ գովութեամբ

...և դաւ պատուական մարմինն ի փոքրագոյն բլրի, որ հայի յարեւմտաւ կոյս ի վերայ Հրազդան գետոյ»:

ՓԻԼԻՊՈՍ ԱՂԲԱԿԵՅԻ

Փիլիպոս կաթողիկոսը ծնվել է Տաճկահայաստանի Աղբակ գավառի Էրեկան գյուղում: Փոքր հասակից առանձին սեր է ունեցել կրոնական կյանքի հանդեպ: Լսելով Սյունյաց Մեծ Անապատի համբավը, նա 14 տարեկան հասակում գալիս է այս անապատը, բայց նրան մերժում են ընդունել, որովհետև դեռ փոքր էր ու անմորուս: Սակայն ուսումնաժամարավ պատանին չի հուսահատվում ու բնակություն հաստատելով անապատին մոտ գտնվող անտառում, մի առժամանակ մնում է այնտեղ: Հետագայում անապատի վանահայր Սարգիս Եպիսկոպոսը խղճահարվելով պատանուն ներս է առնում ու հանձնում Մովսես Տաթևացուն՝ կրթելու և դաստիարակելու համար: Արքունքի հասնելով Աղբակեցին կուսակրոն քահանա է դառնում. այնուհետև էլ իր ցուցաբերած արժանիքների համար հենց նույն Մովսես Տաթևացուց ստանում է փարդապետական գավազան ու քարոզելու իրավունք: Որոշ ժամանակ անց, երբ Տաթևացին կաթողիկոս է դառնում, Փիլիպոս վարդապետն էլ իր ուսուցչի կողմից Եպիսկոպոս է ձեռնադրվում, ամեն գործում աջակից ու զորավիգ լինելով իր հոգևոր հորը:

Երբ մերձիմահ հիվանդ Մովսես կաթողիկոսին շրջապատողները ցանկանում են

իմանալ նրա կարծիքը կաթողիկոսական հաջորդի մասին, նա տալիս է Փիլիպոս Եպիսկոպոսի անունը: Տաթևացու մահվանից հետո էջմիածնի միաբանների համորին ցանկությամբ 1633 թվի հունվարի 13-ին Փիլիպոս Եպիսկոպոսը Ամենայն Հայոց կաթողիկոս է օծվում:

Կաթողիկոսանալով Աղբակեցին մի քանի տարի շարունակ հնարավորություն չի ունենում եռանդուն գործունեություն ծավալելու, որովհետև Երևանն ու ամբողջ Արարատյան դաշտը ռազմի թատերաբեմի էր վերածվել Պարսկաստանի և Թուրքիայի միջև բռնկված ավերիչ պատերազմի հետևանքով: Պատերազմի ընթացքում շատ ավերումներ են տեղի ունենում նաև էջմիածնում ու Աղբակեցին ստիպված է լինում վերանորոգություններ կատարել: Պարսկաստանի ու Թուրքիայի միջև պատերազմները վերսկսվում էին կարճատև դադարներից հետո, դրա հետևանքով էլ դադարի պահերին մեծ ձիգերով վերաշինվածները նորից ենթարկվում էին ավերման: Ավերվում են նաև Տաթևացու շինածները. Աղբակեցին վերանորոգում է դրանք և որպեսզի գալիք պատերազմների ժամանակ շատ շտուժեն, նախկինում եղած ու ավերված փայտաշեն շենքերը փոխարինում է քա-

րաշեն շինքերով: Տաթևացու շինածներին Աղբակեցին ավելացնում է երկու ձիթահանք ու մի շարք այլ շինություններ: Նա նորոգել է տալիս նաև Երևանի Անանիա առաքյալի անապատն իր հարակից շինություններով, այստեղ էլ փայտյա շենքերը քարե շենքերով փոխարինելով:

Փլիլպոս կաթողիկոսը հատուկ ուշադրություն է դարձնում ոռոգման խնդրի վրա: Ցանկանալով ավելացնել Արարատյան դաշտը ոռոգող ջրի քանակը, նա Արագածից բրխող ու Շիրակի կողմը հոսող հորդառատ մի աղբյուրի ընթացքը շրջել է տալիս դեպի հարավային կողմը: Այս աղբյուր ջուրը Քասախ գետի մեջ թափվելով ավելացնում է Վաղարշապատի ու նրա շրջակա գյուղերի կողմից ոռոգման համար օգտագործվող ջրի քանակին: Բացի այդ, նա ավելացնել է տալիս նաև Հրազդան գետի ջրի քանակը, խորացնել տալով նրա Սևանա լճից սկիզբ առնող ակունքը:

Այնուհետև իր հոտին այցելելու նպատակով Աղբակեցին շրջագայության է դուրս գալիս և հասնում մինչև Նոր Զուլա, ուր գտնվում էր Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, որ այնտեղ էր տարվել Շահ-Աբասի ցնորամիտ հրամանով: Ինչպես հայտնի է, այս հնադարյան մասունքի նվիրական տեղը Ս. Էջմիածինն էր հանդիսանում: Փլիլպոս կաթողիկոսը մեծ դժվարությամբ կարողանում է Ս. Աջն ազատել օտարությունից և տարի ու կես շրջագայելուց հետո իր հետ Էջմիածին բերել: «Եվ եղև այս անպատում ուրախություն մաննայն հայոց»: Մի այլ տեղ Դավրիժեցին ասում է. «Քանզի ի վերայ Աջոյն և Էջմիածնի մաննայն ազգն Հայոց կապեալ կան»:

Աղբակեցին անտես չի առնում և Տաթևացու կողմից Հովհաննա վանքում հիմնած դպրատան կարիքները, ամեն կերպ օժանդակելով նրա բարգավաճմանը: Սակայն, մի քանի տարի անցնելուց հետո, նա հարմար է համարում դպրատունը Հովհաննա վանքից Էջմիածին տեղափոխել ու իր անմիջական հսկողության ներքո առնել: Այս դպրատնից, ինչպես Տաթևացու, այնպես էլ Աղբակեցու օրոք բազմաթիվ պիտանի ու պատրաստված հոգևորականներ են դուրս գալիս:

Աղբակեցին նախաձեռնում է նաև Ս. Հռիփսիմի ու Ս. Գայիանի վանքերի հիմնովին նորոգության գործը: Այս երկու վանքերն էլ բավականաչափ քանդված էին և արմատական նորոգության կարիք էին զգում: Քրայց սրբորդ Գայիանեայ կուսի տաճարն առանել աւերեալ էր, դի տանիքն բովանդակ իջեալ էր. միայն շուրջանակի որմունքն և շորեքին սիւնքն կային կանգուն... որոց արար նորոգման սկիզբն... մեծաիղձ կարօտիւ և ջանիւ և

բազում գանձս ծախսելով նորոգեաց գեղեցկաշէն ի հիմանց մինչև ցաղաթն գմբեթին»:

Այսպիսի անշուք վիճակում էր գտնվում նաև Ս. Հռիփսիմի վանքը. «Վասնզի յարտաքուստ կուտէ եկեղեցւոյն գոլիս կաթողիկէին և տանիքն բովանդակ և երեսք որմոցն և յատակք նորին, իսկ ի ներսի կողմանէ բնմն և սալարկ յատակն և շորից խորանաց մէջն՝ այս ամենայն աւերեալ և քայքայեալ էին, վասն որոյ բազում ջանիւ և յոգնակի աշխատութեամբ գուն գործեալ մինչև դամենայն նորոգեալ կատարեցին»: Այս երկու վանքերի նորոգությունը կատարվում է 1651—1653 թվականներին:

Ինչպես Տաթևացին, այնպես էլ Աղբակեցին, իրենց կատարած մեծածախս շինարարության համար պահանջվող նյութական միջոցները հոգում էին ժողովրդական նվիրատվությունների օժանդակությամբ: Ժողովուրդը, չնայած իր անմխիթար, անապահով ու խղճով կացությանը, այնուամենայնիվ սիրով արձագանքում էր այս երկու կաթողիկոսների կողմից ուղարկված նվիրակների կոչերին ու աջակցում Մայր Աթոռում ու նրա շրջակայքում կատարվող շինարարական ձեռնարկումներին: Սա բացատրվում է նրանով, որ ժողովուրդը Լուսավորչի գահին վրա բազմած էր տեսնում արժանավոր հաջորդների, որոնք ընդհանուրի շահերը վեր էին դասում իրենց անձնական շահերից:

Աղբակեցին թուրքահայ հատվածին այցելություն տալու նպատակով մեծ շուքով Էջմիածին շրջագայության է մեկնում: Իր այս շրջագայության ընթացքում նա ամենուրեք մեծ ընդունելություն է գտնում ու մեծարվում: Երբ Կարին է հասնում, Կ. Պոլսի հայերը ընդհանրական Հայրապետի ճանապարհորդությունը Թուրքիայում ապահով ու անվտանգ դարձնելու և հնարավոր անախորժություններից խուսափելու համար, որոնք կարող էին ծագել տեղական իշխանությունների կամայականությունների հետևանքով, իսկույն խնդրամատուց են լինում սուլթանի մեծ եպարքոսին, որպեսզի կառավարության կողմից մի պատվավոր պաշտոնյա նշանակվի՝ կաթողիկոսին իր կատարելիք ամբողջ ճանապարհորդության ընթացքում ուղեկցելու համար: Պոլսի հայերի խնդիրը հարգվում է և մի բարձրաստիճան պաշտոնյա, սուլթանի հրովարտակով հանդերձ, միանում է Փլիլպոս կաթողիկոսի շքամբին ու ուղեկցում նրան՝ մինչև Երևան վերադառնալը: Այս պաշտոնյան վեհի հետ ժամանում է Երևան և Մահմադ Դուլի խանից մի գրություն վերց-

նելով կաթողիկոսին ողջամբ տեղ հասցնելու մասին, վերադառնում է Պոլիս:

Թուրքահայաստանում կատարած շրջադայությունն քննադրում Աղբակեցին ալեկում

նակ այնտեղ է գալիս նաև Սսի Ներսես կաթողիկոսը: Օգտվելով պատեհ առիթից, Փիլիպոս կաթողիկոսը, Ներսես կաթողիկոսի և երուսաղեմի Աստուածատուր պատրիարքի



Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մեծ զանգակատունը

է նաև երուսաղեմ: Այստեղ շորս ամիս մը նախով որոշ շինարարական աշխատանքներ է կատարում հայոց ս. Հակոբա վանքում: Աղբակեցու երուսաղեմում գտնված ժամա-

մասնակցությամբ, մի ժողով է գումարում, որտեղ եկեղեցական մի շարք ցավոտ խընդիրների շուրջը համաձայնություն է կայացվում և տասներեքը կետից բաղկացած մի

պարտագիր որոշում ընդունվում, որով վերջնականորեն սահմանագծվում են Ընդհանրական Մայր Աթոռի կաթողիկոսի և Տանն Կիլիկիո կաթողիկոսի վարչական իրավասության սահմանները Թուրքիայում: Այս ժողովով վերականգնվում է հայ եկեղեցու միասնականությունը, որը խախտվել էր դարերի ընթացքում: Դավրիժեցին հատկապես շեշտում է, որ այս միասնությունն առաջ եկավ եղբայրական սիրո ու ջերմ ցանկության հոգի վրա:

Երուսաղեմից Աղբակեցին ուղևորվում է Կ. Պոլիս, ուր մի ամբողջ տարի մնալով, իր բարձր հեղինակությամբ ձեռնամուխ է լինում այնտեղի հոգևորական խառնակ գործերը կարգավորելու աշխատանքին: Այս քաղաքը մեծ քանակությամբ հայ բնակչություն ուներ և հետզհետե աճում էր հայերի թիվը: Պոլսի հին հայ բնակչությունը խեթ աչքով էր նայում գավառներից եկած նորեկ հայերի վրա և ամեն ինչ իր ձեռքը կենտրոնացնելով, ընդհուպ մինչև Կ. Պոլսի հայոց պատերի քարերի ընտրությունը, թույլ չէր տալիս նրանց մասնակցելու ազգային-եկեղեցական գործերին: Մեծ հմտությամբ բանակցելով երկու կողմերի հետ, ընդհանրական հայրապետը կարողանում է հաշտեցնել նրանց և համաձայնություն կայացնել ազգային-եկեղեցական գործերը միասնաբար վարելու խնդրով: Երկրորդ մեծ գործը, որին ձեռնամուխ է լինում Աղբակեցին, հանդիսանում էր Կ. Պոլսի հայոց եկեղեցիների կուտակված պարտքերի բարձման խնդիրը: Երկպառակությունների հետևանքով եկեղեցիների պարտքերն աճել էին, իսկ հակառակ կողմերը չէին կարողանում համաձայնության գալ այն վճարելու համար: Բացի այդ, հակառակ կուտակվածություններն այս կամ այն պատրիարքին պաշտոնանկ անելու կամ իրենց ցանկացած մարդուն պատրիարք դարձնելու համար պետական պաշտոնյաներին ահազին կաշառքներ էին տալիս, միայն թե հասնեին իրենց նպատակին: Դրենք, պատրիարքացուներն էլ, հաճախ պակաս խոռվարար ու անբարիշտ դեր չէին խաղում այս մեքենայությունների ընթացքում: Սակայն, տրված կաշառքների բեռը ծանրանում էր եկեղեցիների վրա, որոնք հետագայում այլևս հնարավորություն չէին ունենում վճարելու:

Խոհեմ հայրապետը այս գործն էլ է խելացի կերպով կարգավորում: Հետզհետե ժողովրդի բոլոր խավերի սիրտը գրավելով, նա եղած պարտքերը բաշխում է եկեղեցիների ձեռքի վրա, հոգաբարձուներ նշանակել տա-

լիս և կարճ ժամանակում սրանց միջոցով ահագին գումարներ հավաքելով, վճարել տալիս բոլոր եկեղեցիների կուտակված պարտքերը, այսպիսով եկեղեցիներն ազատելով պարտատերերի ձեռքից:

Իր առաքելությունն ավարտած համարելով Աղբակեցին հրաժեշտ է տալիս Պոլսի հայերին ու մեծ շուքով ճանապարհում դեպի էջմիածին: 1653 թվի ամռանը նա վերադառնում է Մայր Աթոռ, ուր արժանանում է միաբանների և ժողովրդի ջերմ ընդունելությանը:

Հաջորդ 1654 թվի գարնանը Փիլիպոս կաթողիկոսը ձեռնամուխ է լինում իր վաղուց իայփայած գործին՝ էջմիածնի վանքի մեծ զանգակատան շինությունը, որը մինչև այսօր էլ անաղարտության պահով է, իր շքնադակերտ ճարտարապետական արվեստով հիացմունք պատճառելով ամենքին: Այս զանգակատան շինարարության ամբողջ ծախսը, Փիլիպոս Աղբակեցու հորդորանքով, հոգացել է Անտոն Չալապի անունով մի հայ մեծատուն: Զանգակատան շինության համար թույլտվություն ստանալու նպատակով Աղբակեցին դիմում է Երևանի Մահմադ Ղուլի խանին, բայց վերջինս մերժում է: Սակայն, Աղբակեցին չի հուսահատվում և մեծ պատասխանատվություն հանձն առնելով, սկսում է զանգակատան շինությունը, որի մի մասը հենց այդ թվականին էլ ավարտվում է: Վրա հասնող ձմռան պատճառով շինարարությունը դադարում է: Խանը լսելով, որ հակառակ իր կամքի զանգակատունը կառուցվում է, սպառնալիքներ է տեղում, որ ինքը էջմիածին գալով պետք է հիմքից քանդել տա այն: Հաջորդ 1655 թվի գարնանը պետք է շարունակվեր ու ավարտվեր զանգակատան շինությունը և Աղբակեցին պիտի անհուն հրճվանք զգար իր հոյակապ գործի ավարտումը տեսնելով: Բայց նրան վիճակված չէր իր սկսած գործի ավարտումը տեսնել: Չուտով նա կարճատև հիվանդությունից հետո վախճանվում է 63 տարեկան հասակում: Միաբանները որոշում են նրան թաղել իր իսկ կառուցած զանգակատան տալիք, բայց խանը արգելք է հանդիսանում այդ մտքին, կրկնելով իր սպառնալիքը զանգակատունը քանդելու մասին: Սակայն խանի շար մտադրությունն անկատար է մնում: Աղբակեցու մահվանից կարճ ժամանակ հետո, նա, իր շարագործությունների համար, պաշտոնանկ է արվում և շղթայակապ Սպահան տարվում: Փիլիպոս կաթողիկոսի դին վեց օր Մայր Տաճարում ի տես և ի համբույր ժողովրդյան մնալուց հետո մեծ հան-

դիսավորության մեջ առնվում է Ս. Հովհաննիսյանի վաղը, և այնտեղ, վանքի ներսում, թաղվում։ Նրա գերեզմանը մինչ օրս էլ գոյություն ունի։

Ամփոփելով Աղբակեցու բեղմնավոր դործունեության նկարագրությունը, Դավրիժեցին հետևյալն է գրում նրա մասին. «Եվ որքան եկաց Փիլիպոս կաթողիկոսն ի վերայ երկրի, թէ ի ժամանակս վարդապետութեան իւրոյ և թէ ի ժամանակս կաթողիկոսութեան, անդադար և անխափան արար և գործեաց նա արդիւնս ի մէջ աշխարհի և մանաւանդ բարձրագահ թոնոն սուրբ էջմիածին սովաւ առաւել հաստատեցաւ և փարթամացաւ եկեղեցական անօթով, ոսկով և արծաթով և մեծագին զգեստութեւ և պատուական գրեթէ, վարդապետականօք բազմօք սոյնպէս և մարմնաւորօք սպասութեւ և կահիւք պղնձեղինօք և բրդեղինօք և ալյուր աշխարհօք. այլ և հոյլք անբան կենդանեաց, ուշտք և ջորիք և ջոխիք մատակ ձիոց և ջոկք խաշանց և անդէոց, այլ և արտս և այդիս և բուրաստանս։ Այլ և բազմազան կերպիւ հոգեւոր և մարմնաւոր արդեամբ օգտակար լինէր աշխարհի, զի իբրեւ զբերդ ամուր էր նա շուրջ զազգիւն Հայոց ընդդէմ մահմետականաց, որք ոչ կարէին ի հարստահարել և ի զգուել զհայս»։

Նախքան Փիլիպոս Աղբակեցու հաջորդ Հակոբ Զուլայեցու կաթողիկոսութեան պատմության անցնելը, հետևելով Դավրիժեցուն, հիշատակենք այն անվանի վանքերի նորոգությունն ու բազմաձախս և մեծավայելուչ եկեղեցիների շինությունը, որոնք կատարվել են Մովսէս Տաթևացու և Փիլիպոս Աղբակեցու օրոք։

Դավրիժեցին գեղեցիկ համեմատությամբ բնութային արթնանալն ու այս երկու անձանց կատարած շինարարությունը նմանեցնում է միմյանց։ Ինչպես գարնանային հարավային հողմի փչելուց երկրի երեսը ծածկվում է պսպուկս գունավոր ու անուշահոտ ծաղիկներով և բազմատեսակ գեղեցիկ բույսերով, այնպես էլ Տաթևացու և Աղբակեցու ժամանակ Հայաստան աշխարհը ծածկվում է վանքերով, անապատներով, եկեղեցիներով ու կամուրջներով։ Առաջնակարգ հնություն էր հանդիսանում Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը, որ քանդված ու ավերված վիճակում էր գտնվում։ Հակոբ Զուլայեցին Փիլիպոս կաթողիկոսի օրոք սկսում է այս վանքի ու նրա հարակից շինությունների նորոգությունը, որը տևում է տասը տարի և մեծամեծ միջոցներ է կլանում, որովհետև քարն ու կղիմիսը Աստապատից բերվելով նավակով Արաքսի վրայով մյուս ամին էր անցկացվում։

Քարի մի մասն էլ բերվում էր Արարդ գյուղից՝ ձիերի վրա բարձած. այսպիսի մեծ դժվարություններով էին տեղափոխվում նաև կիրք, փայտեղենը, ուտելիքը և այլն։ Այս վանքը նորոգվելուց հետո, նաև պարսպապատվում է։ Տաթևացու աշակերտ Նախի եպիսկոպոսի ձեռքով նորոգվում է Նրնջակի Ս. Կարապետի վանքը և նրան առաջվանից ավելի գեղեցիկ ու վայելուչ տեսք է տրվում. վանքին կից ուրիշ շինություններ են կառուցվում և այս ամենը ամուր ու բարձր պարիսպներով շրջապատվում։ Էջմիածնեցի Զաքարիա վարդապետը նորոգում է Հովհաննա վանքը. այս վանքի նորոգությունը արագ է կատարվում, որովհետև նրա նորոգությանը միաժամանակ մեծ թվով վարպետներ ու բանվորներ էին մասնակցում. միայն երեսուն քարտաշ շարունակ քար էին տաշում, իսկ քարն ու կիրք բերվում էր խոր ձորի մյուս կողմից՝ ձիերին բարձած։ Նորոգվում է նաև Թադևոս առաքյալի վանքը Արտազ գավառի Մակու գյուղում, որի բնակիչները թևակոտ աղբատ ու ընշաղուրկ էին, բայց ջերմեհոսություններ լցված գլուխ են բերում վանքի հոյակապ նորոգությունը։ Մկրտիչ եպիսկոպոսի ու միաբանների աջակցությամբ։ Նորոգվում է նաև այս գավառում գտնվող Սանդուխտ կույսի վկայարանը։ Ապա նորոգվում է Մուղնի գյուղի Ս. Դևոթի վանքը։ Իրոք սա ոչ թե նորոգվում, այլ Մարտիրոս եպիսկոպոսի նախաձեռնությամբ հին փոքրիկ ու խարխուլ եկեղեցին իսպառ վերացվելով, նրա տեղը կառուցվում է մի բոլորովին նոր ու ընդարձակ վանք՝ իր հարակից շինություններով ու պարիսպներով։ Աղբակեցու աշակերտ երևանցի Ոսկան վարդապետը, որը, ինչպես հայտնի է, մեծ երախտիք ունի հայկական տպագրության գործում, նորոգել է տալիս Ուշի գյուղի Ս. Սարգիս զորավարի վանքը։ Փիլիպոս Աղբակեցին նորոգել է տալիս Մեսրոպ Մաշտոցի տաճարն Օշական գյուղում։ Աղբակեցու հրամանով և ջուղայեցի խոջա Պետրոսի ծախքով նորոգվում է նաև Բջնի գյուղի Ս. Աստուածածնի տաճարը։ Բացի հիշատակվածներից Դավրիժեցին մի շարք վանքեր ու եկեղեցիներ էլ է թվում, որոնք նորոգվել կամ հիմնովին նորից են շինվել Թիֆլիսում, Լոռու գավառում, Արարատյան դաշտում, Սիսական աշխարհում, Ղաթանում, Նախիջևանում ու նրա գավառում, Գողթնում և այլուր։ Այս բոլոր շինությունների ցանկը Դավրիժեցին փակում է Աշտարակի կամրջի կառուցմամբ, որը կատարվել է երևանցի Գրիգոր Մոծակյանի ծախքով։

ՀԱՂՈՐ ԶՈՒՂԱՅԵՑԻ

Դավրիժեցիին իր պատմությունը Զուղայեցու մասին հասցնում է մինչև 1661 թվականը, հիշատակելով Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի նորոգությունը նրա եպիսկոպոս եղած ժամանակ և Աղբակեցու սկսած մեծ զանգակատան շինության ավարտումը՝ կաթողիկոսության սկզբի տարիներին։ Մնացած տեղեկությունները Զուղայեցու մասին քաղում ենք Զամբուից ու Աղգապատումից։

Հակոբ Զուղայեցին ծնվել է Հին Զուղայում և յոթը տարեկան հասակում, 1605 թվի բռնազաղթի օրերին, իր ծնողների հետ միասին գաղթել է Պարսկաստան։ Փոքր հասակից բերվում է էջմիածին, ուր և ստանում է իր կրթությունը։ Աղբակեցու օրոք, ինչպես հիշատակեցինք, նա եպիսկոպոս էր և զբաղված էր Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի նորոգությամբ։ Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի շրջազայության դուրս եկած տարիներին, Զուղայեցին գալիս է էջմիածին ու վարում կաթողիկոսի տեղակալի պատասխանատու պաշտոնը, իսկ Աղբակեցու մահվանից մի քանի օր էլ անց, 1655 թվի ապրիլի 8-ին, կաթողիկոս է օծվում։

Հակոբ Զուղայեցու առաջին գործը լինում է ավարտել կիսատ մնացած զանգակատան շինությունը, որի համար շատ նեղություններ է կրում. մեծ քանակությամբ ոսկի կաշառք տալով Սրեանի նոր խան Նաջաֆուլուն, նրան հաջողվում է զանգակատան շինությունը շարունակելու իրավունք ստանալ։ Աղբակեցու մահվանից անցնում է երկու տարի մինչև նոր խանից իրավունք ստանալը և այս երկու տարվա ընդհատումից հետո, 1657 թվի ամրանը, Զուղայեցին մեծ եռանդով վերսկսում է զանգակատան շինությունը, իսկ հաջորդ թվի աշնան սկզբին էլ ավարտում է այն։

Զուղայեցին իր կաթողիկոսության հրավարտակն ստանալու համար ուղևորվում է Սպահան ու ներկայանում փոքր Ծահ-Աբաս Բազավորին, որից կարողանում է վանքապատկան գյուղերին վերաբերող մի քանի արտոնություններ կորզել։

Էջմիածին վերադառնալով Զուղայեցին իր նախորդի նման սկսում է դաշտերի ու այգիների ոռոգման համար ջրի նոր աղբյուրներ որոնելով զբաղվել։ Այս նպատակով նա ըս-

տորերկրյա հորերի փորման միջոցով ջուր է բերել տալիս նախ Վաղարշապատ գյուղի ու անդաստանների և ապա Մայր Աթոռի կաթիլների համար։ Կառուցել է տալիս երեք ջրամբար-լճակ, որոնցից մեկը, Վաղարշապատի հյուսիս արևելյան մասում, հատկապես ավելի մեծ։ Այդ լճակներում ամբարված ջրերով ամրանը ոռոգում էին այգիներն ու արտերը։

Զուղայեցին այն կաթողիկոսներից էր, որ քաջ գիտակցելով նորահնար տպագրության արհեստի օգտակարությունը, ամեն կերպ աշխատում էր Հայաստանում կազմակերպել տպագրական գործը. սակայն այն ժամանակվա դաժան պայմանները, տիրող բռնակալությունն ու անսանձ կամայականությունը արգելք են հանդիսանում այս օգտավետ ձեռնարկության իրականացման։ Ուստի Զուղայեցին մտածում է գոնե Եվրոպայի տպարաններում տպագրել տալ իր ցանկացած գրքերը ու տարածել վանքերում և ժողովրդի մեջ. մանավանդ նա մեծ փափագ ուներ հայերեն Աստուածաշունչը տպագրված տեսնել։ Այս նպատակով նա Եվրոպա է ուղարկում մի քանի մարդու, որոնց մեջ ամենանշանավորն էր երեւանցի Ոսկան Վարդապետը։ Վերջինիս, եպիսկոպոս ձեռնադրելուց հետո, Զուղայեցին Եվրոպա է ուղարկում, պարտադրելով իրականացնել Աստուածաշնչի տպագրությունը։ 1662 թվին էջմիածնից ուղևորվելով Ոսկան Երևանցին այցելում է Եվրոպայի մի շարք վայրեր և վերջապես 1663 թվին հասնում Հոլանդիայի Ամստերդամ քաղաքը։ Այստեղ որոշ նախապատրաստական աշխատանքներից հետո նա սկսում է Աստուածաշնչի տպագրությունը, որը տեղում է երկու տարի, 1666—1668 թ. թ.։ Բացի Աստուածաշնչից նա տպագրում է նաև մի քանի այլ գրքեր։ Նյութական սուղ կացության հետևանքով նա ստիպված է լինում Ամստերդամից տեղափոխվել և Եվրոպայի այլ վայրերում հաստատվել։ Այս ժամանակաշրջանում էլ նա տպագրում է Առաքել Դավրիժեցու պատմությունը։

Մինչ Հակոբ Զուղայեցին էջմիածնում շինարարությամբ էր զբաղված, Թուրքահայ եկեղեցականներից մեկը, Նդիազար Այնթափցին (հետագայում, Զուղայեցու մահվանից հետո, Ամենայն Հայոց կաթողիկոս) իր

բնատուր փառասիրությունից դրդված միտք է հղանում թուրքահայերին հանել էջմիածնի կաթողիկոսի իրավասության տակից և ներանց համար թուրքիայում առանձին կաթողիկոսական աթոռ հաստատել: Իր նպատակին հասնելու համար նա օգտագործում է էջմիածնի նվիրակներից մի քանիսի ցուցաբերած ագահության հետևանքով թուրքահայ ժողովրդի էջմիածնի հանդեպ տածած դժգոհությունից: Քանի որ Ալեքսանդրին և՛ ազդեցիկ էր, և՛ ճարպիկ, և՛ միաժամանակ էլ շատ հարուստ, ապա նա անխտիր բոլոր միջոցները գործադրում է իր նպատակին հասնելու համար. նույնիսկ սուլթանից հրովարտակ է ստանում և Կիլիկիո խաչատուր կաթողիկոսի կողմից 1664 թվին Պերայում կաթողիկոս օծվում, այսպիսով դառնալով հակաթոռ կաթողիկոս:

Կ. Պոլսի հայերը այս ինքնակոչ նոր կաթողիկոսի հակաաղգային արարքներից շատ են վշտանում և երկպառակության առաջն առնելու, համատեղ խորհրդակցելու և միասնությունն ու խաղաղությունը վերահաստատելու նպատակով Հակոբ Զուլայեցուն հրավիրում են Կ. Պոլիս: 1665 թվի դարնանը Զուլայեցին մեծ շուքով ճանապարհվում է Թուրքիա, բայց անմիջապես Կ. Պոլիս չի գնում, այլ ընդհանուր դրության հետ ծանոթանալու համար մեկնում է Զմյուռնիա: Այստեղ նա իր կուսակիցներից հրավեր է ստանում Երուսաղեմ մեկնելու և այնտեղ միասին խորհրդակցելու հետագա անելիքների մասին: Զուլայեցին գնում է Երուսաղեմ, բայց տեսնելով որ Երևազարն ու իր կուսակիցներն այստեղ հավատարիմ պաշտպաններ ունեն և այսուհետև իր համար դժվար կլինի նրանց դեմ պայքարել, ուստի բարվոք է համարում թողնել Երուսաղեմը և ուղղակի գնալ Կ. Պոլիս:

Այստեղ Զուլայեցին իր խոհեմ ընթացքով այնքան է գրավում պոլսահայերի սիրտը, որ նույնիսկ Երևազարի կուսակիցներին էլ հրապուրում է իր կողմը ու իր բարձր հեղինակությամբ, հակառակորդների դեմ առանց անխտրժ արտահայտություններ բանեցնելու, զինաթափ է անում բոլորին: Վերջում պոլսեցիք Զուլայեցուն տրամադրում են մեկնել Ադրիանապոլիս, որտեղ այդ ժամանակ զբաղվում էր սուլթանը, և անձամբ խնդրամատուց լինել նրան իր հոգևոր իշխանությունը թուրքահայերի վրա վերահաստատելու հա-

մար: Իր ժամանակի բարբերի համար շատ բնորոշ էր կաթողիկոսի սուլթանին ներկայանալու ձևը: Նախօրոք կաթողիկոսին նախապատրաստում են թե ի՞նչ պիտի ասի սուլթանին և ի՞նչպես պիտի ասի: Եվ ահա Ամենայն Հայոց կաթողիկոս Զուլայեցին այն փողոցի անկյունում, որտեղից պիտի անցնե՞ր սուլթանը, կանգնած նրա երևալուն էր սպասում: Մի ձեռքին աղբսագիրը և մյուս ձեռքին Փիլիպոս կաթողիկոսին սուլթանի շնորհած հրովարտակը, նա լայր կակծանօք և դառն հեծեծանօք՝ այդ դրերը սուլթանին մատուցելիս: Սուլթանը կատարում է Զուլայեցու խնդիրքը, շեղյալ հայտարարելով Երևազարին տրված իշխանությունը: Զուլայեցին իր նպատակին հասնելուց և պոլսահայերի համակրանքը գրավելուց հետո, 1667 թվին, երկու տարվա բացակայությունից հետո, մեծ գոհունակությամբ վերադառնում է էջմիածին:

Վերադարձին նա այցելության է գնում Երևանի Սաֆի խանին: Վերջինս Զուլայեցու բացակայության ժամանակ նրա տեղակալ Մատթեոս եպիսկոպոսից պահանջել էր իրեն տրամադրել անձնական պետքերի համար կաթողիկոսի շինել տված ջրամբարները. սակայն տեղակալը, կաթողիկոսի բացակայությունը պատճառ բռնելով, հնարավոր չէր գտել նրա ցանկությունը կատարել: Այժմ, օգտվելով կաթողիկոսի վերադարձից, խանը նորից բարձրացնում է այդ խնդիրը, սակայն արի կաթողիկոսը բացարձակապես մերժում է, հայտնելով, որ չմեր կեանքն ու կենդանությունն այդ ջրերից են կախած, հետևաբար անհնար է կատարել նրա ցանկությունը: Այս մերժումը չի մոռանում խանը և նրբ այդ դեպքից քիչ անց կաթողիկոսը Սպահան է ուղևորվում նոր շահ Սուլեյմանին ներկայանալու համար, ապա Սաֆի խանը կասկածելով, որ կաթողիկոսը կարող է շահին դանդաղ ներկայացնել իր արարքի մասին, ետ է վերադարձնում նրան Աստապատից և Երևանի Անանիա առաքյալի անապատում պահում համարյա բանտարկվածի պես: Զուլայեցին նպատակին հասնելու համար, չնայած իր պատկանելի հասակին, վերջիվերջո վճռում է փախչել և մի հարմար առիթից օգտվելով ու խանին մոլորեցնելու համար փոխանակ նախիջևանի կողմը ուղևորվելու, դիմում է դեպի հյուսիս՝ Ապարան, Լոռի և այնտեղից էլ ճանապարհը ծնելով,

Աղվանքի վրայով հասնում է Արդաբիլ, ուր նախօրոք ուղարկած է լինում Կ. Պոլսից շահի համար բերել տված թանկագին ընծաները: Այս ընծաներով ծանրաբեռնված նա Արդաբիլից ուղևորվում է Սպահան ու ներկայանում Սուլեյման շահին: Վերջինս լսելով Սաֆի խանի արարքները, կարգադրում է պաշտոնանկ անել և բանտարկել նրան: Շահը կաթողիկոսին հանձնում է Երևանի համար նոր նշանակված Սաֆիղուլի խանին:

Էջմիածին հասնելուց հետո, որոշ ժամանակ անց կաթողիկոսը նկատում է, որ նոր խանը ոչ միայն իր նախորդից ավելի մեծ շարիքներ է գործում, այլև իրեն շրջապատել է այնպիսի խտապահանջ հարկահաններով ու բռնության սիրահար անձերով, որոնք անշափ նեղություններ են պատճառում թըշվառ հայ ժողովրդին: Զուղայեցին այս բոլորը տեսնելով ու խորը մորմոքվելով անգոր էր դրա դեմ մաքառելու: Բարվոք չէր նաև թուրքահայերի վիճակը. նրանց թշվառ վիճակի մասին էլ լուրեր էին հասնում կաթողիկոսին: Զուղայեցուն հաճախ այցելության էին գալիս լատին քարոզիչներ, որոնք պատմում էին նրան եվրոպական ժողովուրդների վայելած համեմատաբար ապահով կյանքի մասին: Ինքն էլ, Կ. Պոլսում, Երուսաղեմում ու Զմյուռնիայում եղած ժամանակ շփվելով եվրոպացիների հետ, ծանոթացել էր նրանց կյանքի հետ: Համեմատելով եվրոպական ժողովուրդների կյանքը Թուրքիայի ու Պարսկաստանի բնատիրության ճիրաններում հեծող հայ ժողովրդի կյանքի հետ, Զուղայեցին շարունակ մտածում էր այն մասին, թե արդյոք հնարավոր չէ՞ եվրոպական քրիստոնյա պետությունների օժանդակությամբ թեթևացնել հայ ժողովրդի անտանելի ծանր վիճակը: Այս նպատակով 1678 թվին նա էջմիածնում մի խորհրդակցություն է հրավիրում, որին մասնակցում էին վեց հոգևորական և վեց աշխարհական անձեր: Աշխարհական անձինք եկել էին Ղարաբաղից. սրանցից մեկը հայտնի Խարայեվ Օրին էր:

Այս խորհրդակցության ժամանակ Զուղայեցու գլխավորությամբ մի պատգամավորություն է ընտրվում, որը պետք է գնար Կ. Պոլիս և այնտեղի բանիմաց մարդկանց հետ խորհրդակցելուց հետո գործնական քայլերի դիմել: Հակոբ կաթողիկոսը, շնայած իր ավելի քան ութսունամյա հասակին, սիրով հանձն է առնում պատգամավորների հետ Կ.

Պոլիս ուղևորվել և առանց խանից թույլտվություն ստանալու Թիֆլիսի վրայով ճանապարհվում է այնտեղ: Խանը կաթողիկոսի ճանապարհվելն իմանալով մարդիկ է ուղարկում նրա ետևից՝ պահանջելով ճանապարհից ետ վերադառնալ, սակայն Զուղայեցին անսալով խանի հրամանին, շարունակում է իր ճանապարհը ու 1679 թվի դեկտեմբերին հասնում է Կ. Պոլիս:

Գործի լրջությունը պահանջում էր ընդհանուր համաձայնության գալ Կ. Պոլսի թե՛ ազդեցիկ անձանց և թե՛ հակաթուր կաթողիկոս Նդիազարի հետ, որն այդ ժամանակ պատրիարքություն էր անում Երուսաղեմում ու ազդեցիկ շատ կուսակիցներ ունեւր Թուրքիայում: Հակոբ կաթողիկոսը հատուկ մարդ է ուղարկում Երուսաղեմ՝ ազգային ընդհանուր հարցերի շուրջը խորհրդակցելու համար հղափայտաբար նրան Կ. Պոլիս հրավիրելու: Ի պատիվ Նդիազարի պիտի ասել, որ նա սիրով ընդունում է Զուղայեցու հրավերը և խոստանում գարունն անցնելուն պես Կ. Պոլիս գալ: Մինչ այդ ձերոնազարդ հայրապետը հիվանդանում է և 1680 թվի ամռանը վախճանվում 82 տարեկան հասակում ու հենց այդտեղ էլ թաղվում:

Զուղայեցու մահվամբ ծրագրված առաքելությունը ձախողվում է, իսկ պատգամավորներից մեկը՝ Խարայեվ Օրին գնում է Եվրոպա ու հուսախաբ այնտեղից անցնում Ռուսաստան, հայ ժողովրդի փրկության գործը վերջնականապես կապելով ուսա մեծահոգի ժողովրդի հետ, որ և հետագայում իրականանում է:

Համառոտ կերպով շարադրելով այս երեք վերանորոգիչ կաթողիկոսների գործունեության պատմությունը, տեսնում ենք, որ նրանք ջանք չեն խնայել տիրող դաժան պայմաններում հայ եկեղեցին բարեկարգ վիճակում պահելու: Քաղաքական իշխանությունից երկար ժամանակ զրկված հայ ժողովուրդն իր միակ մխիթարությունը այն ժամանակներում դառնում էր հենց այդ եկեղեցու ծոցում, որը հեռավոր դարերից գալով, ազնիվ ավանդունքը ազգության ամբողջությունը պահպանելու, մինչև որ ապագայում քաղաքական իշխանության տիրացման մի նոր արշալույս կծագեր Հայաստանի աշխարհի վրա: Հայ եկեղեցու երեք վերանորոգիչ այս կաթողիկոսները իրենց՝ անձնուրաց գործունեությամբ, առաքելի ու օրինակելի կենցաղով ուրույն տեղ են գրավում հայ եկեղեցու

սլատմագրության մեջ. սրանք անձնական շահն ուրանալով, շարունակ հայ եկեղեցու, հայ ժողովրդի բարօրության մասին էին մըտածում և դրա համար մաքառում, աշատեղ ու աշատեղ, Սպահանից մինչև Կ. Պոլիս, Բաղդադից մինչև Ադրիանապոլիս բռնավոր շահերի, սուլթանների, խանների, հշխանավորների շեմքերը մաշում, շատ անգամ էլ իրենց մարդկային արժանապատվությունը գոհաբերելով ստորանում, խղճալի կացության մեջ դնում իրենց անձր: Սակայն գործի վեհ նպատակը նրանց թեալնորում էր և նրանք ընկճվել չգիտեին:

Հակոբ կաթողիկոսի օրոք էջմիածնում գումարված խորհրդակցությունը վկայում է, որ նրանք ավելի լայն հորիզոններ են ընդգրկել և ավելի կարևոր նպատակներ հետապնդել:

Նրանք նշանավոր են և իրենց ժրաշան շինարարությամբ. նրանք բազմաթիվ վանքեր են վերանորոգել ու ամենուրեք էլ, այն ժամանակվա սովորության համաձայն, վանքերին կից դպրատներ, դպրոցներ հիմնել և բոլոր հնարավոր միջոցներով պարսկա-թուրքական բռնատիրական իրականության պայմաններում հոգևոր հովիվների մտավոր ու բարոյական դաստիարակման խնդիրն իր կողման բարձրության վրա դրել: Նրանք կանգ չառնելով դժվարությունների առաջ, նույնիսկ հեռավոր Եվրոպայում տպարաններ են հիմնել ու աշատեղ տպագրված գիրք ու գրականությունը տարածել Հայաստան աշխարհում: Եվ ահա հենց իրենց այս բեղմնավոր գործունեության համար է, որ նրանք արժանացել են վերանորոգիչ կաթողիկոսների պատվավոր կոչմանը:

